ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-04/20» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

Հ. Արենի 24. 03. 2020թ.

ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Սիմոնյան

Անդամներ՝ Արմինե Վարդանյան

Լիանա Բաբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մանվել Գրիգորյան

« ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-04/20 » **ծածկագրով** *գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին*

1. Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են *Արենի բնակավայր, 15 փողոց 3շենք հասցեում*, նիստերի դահլիճում:

2. Ընդունել ի գիտություն, որ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1.	<< Ջերմուկշին>> ՓԲԸ	Ք. Ջերմուկ, Շահումյան 25	Հեռ. 093-77-77-49
2.	<<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ	Ք. Երևան, Ջրվեժ, Մայակ թաղ. 27/8	Հեռ. 055-90-70-70 avetisyanshin@mail.ru

3. *Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան:*

4. *Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

4.1.<< Ջերմուկշին>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա բացթողումներ չկան: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

4.2. <<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա են բացթողումներ՝ մասնավորապես հրավերում

նախատեսված փաստաթղթերում բացակայում են բանկային երաշխիքը կամ կանխիկի վճարման հանձնարարագիրը և ներկայացված չէ ծավալաթերթ -նախահաշիվը:

5. *Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.*

- << Ջերմուկշին >> ՓԲԸ -ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

- <<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի անդամների կողմից հայտնաբերվեց, որ բանկային երաշխիքը կամ կանխիկի վճարման հանձնարարագիրը և ծավալաթերթ –նախահաշիվը ներկայացված չեն:

6. *Մասնակիցների առաջարկած գինը՝*

1. Վայոց ձորի մարզ, Արենի համայնքի Ելփին բնակավայրի <<Սարի թաղ>> թաղամասում կիսախողովակների տեղադրում ոռոգման ցանցի կառուցում

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը Թվերով (տառերով)	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	<<Ջերմուկշին>> ՓԲԸ	32 794 100 / երեսուներկու միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար հարյուր/	23 560 940 /քսաներեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար ինը հարյուր քառասուն/	2 356 096 / երկու միլիոն երեք հարյուր հիսունվեց հազար իննսունվեց /	5 183 407 / հինգ միլիոն հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր յոթ/	31 100 443 / երեսունմեկ միլիոն հարյուր հազար չորս հարյուր քառասուներեք /
2	<<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ	32 794 100 / երեսուներկու միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար հարյուր/	23 530 000 /քսաներեք միլիոն հինգ հարյուր երեսուն հազար/	2 300 000 / երեկու միլիոն երեք հարյուր հազար/	5 166 000 / հինգ միլիոն հարյուր վաթսունվեց հազար/	30 996 000 / երեսուն միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար/

2. Աղավնաձոր բնակավայրում թվով 4 կապտաժների վերանորոգման աշխատանքներ

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը Թվերով (տառերով)	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	<<Ջերմուկշին>> ՓԲԸ	15 816 760 / տասնհինգ միլիոն ութ հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր վաթսուն/	11 364 100 /տասնմեկ միլիոն երեք հարյուրվաթսուն չորս հազար հարյուր/	1 136 410 /մեկ միլիոն հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր տաս/	2 500 102 / երկու միլիոն հինգ հարյուր հազար հարյուր երկու /	15 000 612 / տասնհինգ միլիոն վեց հարյուր տասներկու /
2	<<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ	15 816 760 / տասնհինգ միլիոն ութ հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր վաթսուն/	10 560 000 / տասը միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/	1 100 000 / մեկ միլիոն հարյուր հազար/	2 332 000 / երկու միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար/	13 992 000 / տասներեք միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար/

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. « ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-04/20 » ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ -ին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:
2. Առաջարկվեց <<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել փաթեթում առկա բացթողումները և ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում մրցույթի հաղթող կճանաչվի <<Ջերմուկշին>> ՓԲԸ-ն:
3. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
4. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:
5. Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. *Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.*

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գևորգ Սիմոնյան

Անդամներ՝ _____ Արմինե Վարդանյան

_____ Լիանա Բաբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մանվել Գրիգորյան